Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

38
Խ-11

D 120-10

Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք!

ՆԻ ԿՈԼԽՈԶԿԵՆՏՐՈՆ

# ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՄՍԻ ՄԹԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Գինը 25 կոպ.

ԱԶԵՐՆԵՇՐ

1932—ԲԱԳՈՒ

Խմբագիր — Լ. ԴԱՆԻԵԼՅԱՆ
Թարգմանիչ — Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Տեխ խմբագիր — Կ ԹԱԴԼԱՆՅԱՆ

Հանձնված է տպագրության նոյեմբերի 16-ին
Թույլատրված է տպագրելու նոյեմբերի 22-ին
Տպագրված յերեսների քանակը 7/8
Տպագրված նշանների քանակը 47.600

Тип „III Интернационал" Бакполиграф Главлит 7531 Заказ 3140 Тираж —500

# ԱՆԱՍՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂՈՒ ՎՐԱ

## („ՊՐԱՎԴԱ"-Ի 1932 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-Ի № 267-Ի ԱՌԱՋՆՈՐԴՈՂԸ)

Յերեք օր առաջ «Պրավդա»-ում հրապարակվել է ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի և կուսակցության Կենտրոնական Կոմիտեի վորոշումը մսամթերումների մասին: Այդ վորոշումն առաջին նշանակություն ունի մի քանի տեսակետից: Ամենից առաջ՝ նա ծառայում է կոլխոզների հետագա կազմակերպչա — տնտեսական ամրապնդման, սովխոզային արտադրության վորակական վերելքի և անասնաբուծական պրոբլեմի հաջող լուծման գործին: Նա անխզելի կերպով կապված է կուսակցության և կառավարության կողմից վերջին տարվա ընթացքում այդ ուղղությամբ ընդունած բոլոր միջոցառումների հետ. — անասունների ստիպողական համայնացումը կտրականապես արգելելու մասին մարտի 26-ի վորոշման հետ և մսամթերումների պլանը յերկու անգամ կրճատելու մասին յեղած մայիսի 10-ի վորոշման հետ:

Իսկ ի՞նչ նոր բան է մտցնում մսամթերումների մասին Կենտկոմի և Ժողկոմխորհի վորոշումը: Ամենից առաջ՝ նա յելնելով մայիսի 10-ին ընդունված, մսամթերումների կրկնակի կրճատված պլանից՝ 15 ամիս առաջ սահմանում է յուրաքանչյուր տնտեսու-

1 1 SEP 2013
54.857

թյան համար պետությանը միս մատակարարելու (հանձնելու) հաստատուն նորմաները: Սրա հետ միասին իշխանության տեղական օրգաններին, նույնպես և մթերող կազմակերպություններին կտրականապես արգելվում է բարձրացնել ռայոնական հանձնման նորմաները և լրացուցիչ կամ հանդիպակաց առաջադրություններ տալ այն տնտեսություններին, վորոնք ժամանակին առաջ կատարել են իրենց պարտականությունները:

Սա նշանակում է, վոր յուրաքանչյուր կոլխոզ, յուրաքանչյուր կոլխոզնիկ և աշխատավոր մենատնտես՝ յելնելով 15 ամսվա մսամթերումների համար իր ստացած պլանից, — վորի մեջ մատնանշված է, թե ինչ ժամկետներում վորքան միս պիտի ինքը հանձնի, — հնարավորություն է ստանում իր տնտեսությունում հաստատապես պլանավորել անասնաբուծության զարգացումը: Այս հանգամանքը, նախ հեշտացնում է գյուղացիների համար մսամթերումների պլանի կատարումը և, յերկրորդ, ել ավելի ուժեղացնում նրանց շահագրգռվածությունը՝ անասնապահությունն ել ավելի զարգացնելու մեջ:

Դրա հետ անմիջականորեն կապված է կոլխոզնիկներին և մենատնտեսներին թույլատրելը խմբեր կազմելու՝ պետությանը միս մատակարարելու պարտականությունները միասին կատարելու համար: Դա հնարավորություն է տալիս, անասունների և թռչունների վորևէ տեսակով պարտավորությունները կատարելու հետ միասին և բավականաչափ ուժեղացնել կոլխոզնիկի ու մենատնտեսի տնտեսական մանևրներ անելը՝ թե մսամթերումների պլանը ժամանակին ու հաջողությամբ կատարելու և թե անասնաբուծու-



35470-66

թյունը զարգացնելու գործում: Օրինակ, մի քանի տնտեսություններ կարող են իրար հետ համաձայնության գալ, վոր նրանցից մեկը վորոշ պայմաններով հանձնում է բոլորի փոխարեն, ասենք, մի կով կամ մի խոզ: Դա նույնպես ահագին թեթևություն է պլանը կատարելիս և անկասկած ել ավելի նպաստում է անասնաբուծության թե ընդլայնմանը և թե վորակական բարելավմանը:

Հետո, յեթե քննենք Ժողկոմխորհի և կուսակցության Կենտկոմի կողմից սահմանված մսի հանձնման նորմաները զանազան տիպի տնտեսությունների համար և ժամկետները, ապա դժվար չի լինի նկատել յերկու հանգամանք: Առաջինը, Կենտկոմն ու կառավարությունը նորմաները սահմանելիս յելնում են առանձին ռայոնների առանձնահատկությունների հաշվառումից, ձգտելով, վորպեսզի մսամթերումների պլանի կատարումը վորևէ չափով արգելք չհանդիսանա այս կամ այն ռայոնում անասնաբուծության արագ վերելքին: Դա նույնպես գյուղացիների համար ահագին չափով թեթևացնում է մսամթերումների պլանի կատարումը և անկասկած կաջակցի նրանց շահագրգռվածության հետագա աճմանը՝ անասնաբուծության զարգացման գործում:

Յերկրորդ: Վորոշման մեջ մատնանշված մսի հանձնման նորմաները, առանձնապես խթան են հանդիսանում սոցիալիստական անասնաբուծության (կոլխոզային ֆերմաների) զարգացմանը և կոլխոզնիկների համար արտոնյալ են՝ մենատնտեսությունների համար սահմանված նորմաների համեմատությամբ: Այդ հանգամանքն ավելի ամուր, ավելի հաստատուն կերպով է կապում կոլխոզնիկի անձնական շահը կոլխո-

գի ամբողջ շահի հետ, ուժեղացնում է կոլխոզնիկի շահագրգռվածությունը կոլխոզային անասնաբուծության զարգացման, կոլխոզային ապրանքային ֆերմաների կառուցման, սոցիալիստական սեփականության պաշտպանության մեջ:

Այսպես է Ժողկոմխորհի և Կենտկոմի նոր վորոշման նշանակությունը՝ կոլխոզների կազմակերպչատնտեսական ամրապնդման գործի և գյուղացիական սեկտորում անասնաբուծության հետագա զարգացման ու վորակական բարելավման համար:

Սովխոզներում անասնաբուծության զարգացման և վորակական բարձրացման տեսակետից այդ վորոշումը, ինչպես և Ժողկոմխորհի ու Կենտկոմի մայիսյան վորոշումը՝ սկզբունքային մեծ նշանակություն ունի: Սովխոզների կողմից հանձնելիք մսի պլանի յերկու և կես անգամ մեծացնելն առանձին ուժով ընդգծում է բոլոր սովխոզային կազմակերպությունների, հողային ու կուսակցական որգանների վճռական շրջադարձի և ուշադրության կենտրոնացման անհրաժեշտությունը՝ սովխոզների ապրանքային արտադրանքի արտադրության խնդրի վրա:

Անասնաբուծական սովխոզների աշխատանքի մասին կայացրած ապրիլյան հայտնի վորոշման մեջ, Կենտկոմը և կառավարությունը վճռականորեն դատապարտել են այն փորձերը, վորով սովխոզային արտադրության դրույթի թերությունները աշխատում են բացատրել հենվելով միայն շինարարության սկզբնական շրջանի վրա: Կենտկոմը և կառավարությունն այն ժամանակ ընդգծել են այն ահագին վնասը, վոր հասցրել է բանվորների, բանակի և քաղաքի մյուս աշխատավորների մատակարարման գործին, վորն



առաջ է յեկել անասնաբուծական սովխոզներում գործի անտնտեսավարական դրույթով և դրա շնորհիվ նրանց կողմից ապրանքային արտադրանքի հանձնման պլանները չկատարելուց: Դրա համար խիստ պատասխանատվություն են կրել այն մարդիկ, վորոնք թույլ են տվել այդպիսի խայտառակություն: Կենտկոմը և կառավարությունը նույն վորոշման մեջ մատնացույց են արել սովխոզային արտադրության վերակառուցման և ամրապնդման ուղիները: Այսօր պետք է պատասխան տալ, թե այդ ցուցմունքներն ինչպես են իրագործվել: Պետք է պատասխանել ըստ էության, այսինքն մսի հանձնման կրկնապատկված պլանի ճշգրիտ կատարումով:

Սովխոզների աշխատանքի տեսակետից Ժողկոմխորհի և Կենտկոմի մսամթերումների մասին յերեկ հրապարակված վորոշման նշանակությունը կայանում է նրանում, վորպեսզի այդ վորոշումը սովխոզների կողմից կուսակցության և կառավարության դիրեկտիվների կատարման իսկական ստուգման սկիզբը լինի ու սովխոզային անասնաբուծության հետագա զարգացման ու վորակական վերելքի համար մղվող պայքարում՝ ուժեղ և նոր խթան հանդիսանա:

Վերջապես, մսամթերումների մասին կայացրած վորոշումն անհրաժեշտ է գնահատել բանվորների, Կարմիր բանակի և քաղաքների բոլոր աշխատավորների մատակարարման հետագա բարելավման համար մղվող պայքարի տեսակետից: Կուսակցական կազմակերպությունները պարտավոր են յուրացնել, վոր այդ խնդրի լուծումը հսկայական դեր է խաղում սոցիալիստական շինարարության հետագա ծավալման համար: Միայն այս յերկու տարում գործադրության են դրված հարյուրավոր նոր ձեռնարկներ: Գյուղից

*քաղաք են յեկել հարյուր հազարավոր նոր բանվորներ: Արտադրության մեջ դրանց ամրացնելու, սովորեցնելու և դաստիարակելու խնդիրը թելադրում է բոլոր կազմակերպություններին ամենաուժեղ աշխատանքի անհրաժեշտությունը՝ բանվոր դաստիարակելի այդ նոր խավերի նյութական — կուլտուրական սպասարկման ասպարիզում:*

*Վոչ պակաս սրությամբ դրված է նաև բանվորական հին կադրերի կենսական մակարդակն ըստ ամենայնի բարձրացնելու խնդիրը: «Բանվորն այժմ այն չէ, ինչ վոր առաջ էր: Այժմյան բանվորը, մեր խորհրդային բանվորը ցանկանում է ապրել լիովին բավարարելով իր նյութական և կուլտուրական պահանջները՝ և սննդա — մատակարարման կողմից, և բնակարանների կողմից, և կուլտուրական ու բոլոր այլ պահանջների ապահովման տեսակետից: Նա այդ բանի համար իրավունք ունի, և մենք պարտավոր ենք ապահովելու նրա համար այդ պայմանները»* (Ստալին):

Ուստի ամենից ավելի անխնա հակահարվածի պիտի հանդիպեն Ժողկոմխորհի և Կենտկոմի կողմից սահմանված մսամթերումների պլանի կատարումից ազատվելու մի կերպ դուրս պրծնելու աջ—օպորտունիստական փորձերը: *Ինչպես մենք արդեն ցույց ենք տըվել, այդ վորոշումն առաջին հերթին հաշվի է առնում առանձին ռայոնների առանձնահատկությունները, ահագին չափերով թեթևացնում է պլանի կատարումը և աջակցում է անասնաբուծության հետագա զարգացմանը: Ուստի և կուսակցությունն իրավունք ունի պահանջելու յուրաքանչյուր կուսակցական կազմակերպությունից՝* կատարել պլանն ինչ գնով էլ վոր լինի:

Դրա հետ միասին կուսակցական կազմակերպու-



թյունները պետք է շարունակեն ամենավճռական պայքարը անասունների ստիպողական համայնացման «ձախ» պրակտիկայի դեմ, վորն արգելք է հանդիսանում կոլխոզներում և առանձին կոլխոզնիկների մոտ անասնաբուծության զարգացմանը:

*Մսամթերումների այն կարգավորումը և այն դյուրությունները, վոր այդ գործում տրված են գյուղացիներին և մանավանդ կոլխոզնիկներին՝ գյուղում ամենալայն քաղաքական բացատրական աշխատանքի հիմքը պետք է ծառայեն: Կոլխոզնիկին և մենատնտեսին պետք է ցույց տալ նրա համար այն բոլոր առավելություններն ու օգուտը, վոր տալիս է մթերումների նոր կարգը և, մանավանդ՝ անասնաբուծության հետագա զարգացման տեսակետից: Դրա հետ միասին անհրաժեշտ է բացատրել, վոր բոլոր գյուղացիական մենատնտեսությունների և կոլխոզային ծխերի համար պետությանը միս հանձնելու համար սահմանված պարտավորությունները* հարկի ուժ *ունեն՝ այստեղից բղխող բոլոր հետևանքներով: Այսինքն, ճշտապահ հանձնողներին ապահովվում է լիակատար հնարավորություն ազատորեն կարգադրելու իր արտադրանքի ավելցուկը, իր հայեցողությամբ: Իսկ պարտավորությունները կատարելուց խուսափողները յենթարկվում են դրամական տուգանքի, հանձնման յենթական անասունի գրավումով:*

*Կասկած չկա այն բանում, վոր մսամթերումների մասին Ժողկոմխորհի և Կենտկոմի վորոշումն աշխատանքային ակտիվության նոր վերելք առաջ կբերի սովխոզների բանվորների, կոլխոզնիկների և աշխատավոր մենատնտեսների մեջ և մեծագույն դեր կխաղա սոցիալիստական անասնաբուծության զարգացման ու անասնաբուծական պրոբլեմի լուծման գործում:*

# ՄՍԱՄԹԵՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

## ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՅԵՎ ՀԱՄԿՈՄԿՈՒՍԻ (Բ) ԿԵՆՏԿՈՄԻ

## ՎՈՐՈՇՈՒՄԸ

Մսի մթերումների գործը կանոնավորելու և մսա մթերումների կրճատված պլանի (Ժողկոմխորհի և կենտկոմի ս. տ. մայիսի 10-ի գյուղացիների հետագա թեթևացման մասին վորոշումն իրագործելու նպատակով Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը և ՎԵԿԱՊԲ-ի (բ) կենտկոմը վորոշում են.

1. Հաստատել սովխոզների կողմից մսի հանձնման պլանը՝ 1932 թվի հոկտեմբերի 1-ից մինչև 1934 թվի հունվարի 1-ի ժամանակաշրջանում — 300 հազար տոնն՝ նախընթաց 15 ամսում հանձնած 130 հազար տոննի դիմաց, այդ թվում ըստ սովխոզմիավորումների (հազար տոններով).

| | | |
|---|---|---|
| 1. | Անասնաբուծական միացություն | 70 |
| 2. | Խոզաբուծական միացություն | 90 |
| 3. | Վոչխարաբուծական միացություն | 55 |
| 4. | Ցուղագործական միացություն | 19 |
| 5. | Բանջարա-միացություն | 0.9 |
| 6. | Պետազնվասերմտրեստ | 0,6 |
| 7. | Գոսպրոմսովխոզտրեստ | 1,6 |
| 8. | Հացահատիկների տրեստ | 1,1 |
| 9. | Ուկրայինայի հանրապ. սովխոզներ | 5,3 |
| 10. | Բելոռուսիայի հանրապետ. սովխոզ | 4,0 |
| 11. | Անդրկովկասի հանրապետ. սովխոզ. | 0,2 |
| 12. | Միջին Ասիայի հանրապ. սովխոզ. | 4,0 |
| 13. | Շաքար միություն | 18,0 |
| 14. | Մատակ. ժողկոմ. խոզատրեստներ | 8,0 |
| 15. | Կարակուլ միություն | 1,8 |
| 16. | Ոլենեվոդտրեստի | 4,4 |
| 17. | Մնացած սովխոզները | 15,8 |

2. 1932 թվի հոկտեմբերի 1-ից բոլոր անհատական գյուղացիական տնտեսությունների և կոլխոզային ծխերի համար, վորոնք հարկի ուժ ունեն, սահմանել պետությանը միս մատակարարելու (հանձնելու) պարտավորություններ՝ սահմանված պետական գներով:

3. Հաստատել 15 ամսվա համար — 1932 թվի հոկտեմբերի 1-ից մինչև 1934 թվի հունվարի 1-ը — միս հանձնելու հետևյալ նորմաները կենդանի քաշի կիլոգրամներով՝ անհատական գյուղացիական տնտեսությունների համար առանձին, ապրանքային անասնաբուծական ֆերմաներ չունեցող կոլխոզների կոլխոզային ծխերի համար առանձին և ապրանքային անասնաբուծական ֆերմաներ ունեցող կոլխոզների կոլխոզային ծխերի համար առանձին.

## ՌԱՅՈՆՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ

| ՌԱՅՈՆՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ | Անհատական գյուղացիակ. տնտեսությ. համար | Անաս. ապր. ֆերմ. չունեց. կոլխոզային ծխերի համար | Ապր. անաս. ֆերմ. ունեց. կոլխոզային ծխերի համար |
|---|---|---|---|
| 1. Կիրգիզիայի ԱԽՍՀ | | | |
| 2. Արևել. Սիբիրյան երկ. | | | |
| 3. Արևմտա-Սիբիրյան երկ. | | | |
| 4. Յակուտիայի ԱԽՍՀ | 50 | 32 | 25 |
| 5. Արևմտյան շրջան | | | |
| 6. Բելոռուսիայի ԽՍՀ | | | |
| 7. Ուրալի շրջան | | | |
| 8. Բաշկիրիայի ԱԽՍՀ | | | |
| 9. Նիժեգորոդյան երկիր | | | |
| 10 Հյուսիսային երկիր | | | |
| 11 Լենինգրադի շրջան | | | |
| 12 Մոսկվայի շրջան | | | |
| 13. Միջին-Վոլգայի երկիր | | | |
| 14. Թաթարական ԱԽՍՀ | | | |
| 15. Ղրիմի ԱԽՍՀ | 45 | 30 | 20 |
| 16. Կազակստանի ԱԽՍՀ | | | |
| 17. Հյուսիս Կովկասյան երկիր | | | |
| 18. Ուկրայինայի ԽՍՀՄ | | | |
| 19 Անդրկովկասյան ՍՖԽՀ | | | |
| 20. Ստորին Վոլգայի երկիր | | | |
| 21. Հեռավոր-Արևելյան երկիր | | | |
| 22. Կենտրոնական Սևհողյան շրջան | | | |
| 23. Իվանովսկի շրջան | | | |
| 24. Կարելիայի ԱԽՍՀ | | | |
| 25. Կարա Կալպակի ԱԽՍՀ | 40 | 25 | 15 |
| 26. Ուզբեկստանի ԽՍՀ | | | |
| 27. Թուրքմենիայի ԽՍՀ | | | |
| 28. Տաճիկստանի ԽՍՀ | | | |

Սահմանել հետևյալ օրացուցային ժամկետները, ծխին ընկնող նորմաների տոկոսներով մենատնտեսների և կոլխոզնիկների կողմից մսամթերումների 15–ամյա պլանի կատարման՝ ըստ շրջանների, երկրների, հանրապետությունների․

| Երկրների, շրջանների, հանրապետությունների անունները | 1932 թ. 4-րդ եռամս. | 1933 թ. 1 եռ. | 2 եռ. | 3 եռ. | 4 եռ. |
|---|---|---|---|---|---|
| 1. Հյուսիսային երկիր | 6 | 19 | 13 | 28 | 34 |
| 1. Կարելիայի ԱԽՍՀ | 27 | 15 | 8 | 23 | 27 |
| 3. Լենինգրադի շրջան | 25 | 13 | 10 | 22 | 30 |
| 4 Արևմտյան շրջան | 27 | 14 | 13 | 19 | 27 |
| 5. Մոսկվայի շրջան | 22 | 21 | 14 | 19 | 31 |
| 6. Իվանովսկի շրջան | 25 | 17 | 10 | 17 | 24 |
| 7. Նիժեգորոդյան երկիր | 27 | 13 | 13 | 20 | 28 |
| 8. Ուրալի շրջան | 27 | 13 | 13 | 19 | 27 |
| 9, Բաշկիրիայի ԱԽՍՀ | 27 | 14 | 14 | 18 | 31 |
| 10. Թաթարիայի ԱԽՍՀ | 16 | 12 | 13 | 23 | 25 |
| 11. Միջին Վոլգայի երկիր | 25 | 14 | 14 | 22 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 12. Կենտր. Սեւհողյան շրջան | 21 | 15 | 13 | 20 | 31 |
| 13. Ստորին Վոլգայի յերկիր | 28 | 12 | 17 | 20 | 23 |
| 14. Հյուսիսայրն-Կովկաս. յերկիր | 28 | 14 | 16 | 19 | 23 |
| 15. Ղրիմի ԱԽՍՀ | 20 | 23 | 18 | 16 | 23 |
| 16. Կազակստանի ԱԽՍՀ | 27 | 14 | 15 | 19 | 25 |
| 17. Կարա-Կալպակի ԱՍԽՀ | 19 | 21 | 12 | 21 | 27 |
| 18. Կիրգիզական ԱՍԽՀ | 21 | 16 | 22 | 20 | 21 |
| 19. Արեւմտա-Սիբիրյան յերկիր | 23 | 10 | 15 | 24 | 28 |
| 20. Արեւելա-Սիբիրյան յերկիր | 35 | 8 | 15 | 13 | 29 |
| 21. Յակուտիայի ԱԽՍՀ | 36 | 18 | 18 | — | 28 |
| 22. Հեռավոր-Արեւելյան յերկիր | 35 | 13 | 9 | 13 | 30 |
| 23. Ուկրայնայի ԽՍՀ | 32 | 15 | 13 | 19 | 21 |
| 24. Բելոռուսիայի ԽՍՀ | 31 | 15 | 14 | 13 | 27 |
| 25. Անդրկովկասյան ՍՖԽՀ | 16 | 15 | 17 | 26 | 26 |
| 26. Միջին Ասիա | 28 | 12 | 19 | 23 | 18 |
| Ընդամենը ԽՍՀՄ-ում | 26 | 14 | 14 | 20 | 26 |

5. Այն ապրանքային անասնաբուծական ֆերմաների համար, վորոնք ձեւակերպված են հողային և կոլխոզային որգանների կողմից սույն վորոշումը հրապարակելու մոմենտին, սահմանել միսը պետությանը հանձնելու առանձին պլան, 1932 թվի հոկտեմբերի 1-ից մինչև 1934 թվի հունվարի 1-ը ժամկետով՝ հետեւյալ նորմաներով, կենդանի քաշի կիլոգրամներով:

ԿԱԹՆԱՅԻՆ ՖԵՐՄԱՆԵՐ. — 1932 թ. հոկտեմբերի 1-ին ունեցած հոտի յուրաքանչյուր կովից 30 կիլոգրամ, բացառությամբ ամբողջ մատղաշը:

ԽՈՇՈՐ ՅԵՂՋՈՒՐԱՎՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՄՍԱՖԵՐՄԱՆԵՐԸ. — 1932 թ. հոկտեմբերի 1-ին ունեցած հոտի յուրաքանչյուր գլխից 30 կիլոգրամ:

ԽՈԶԱԲՈՒԾԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՐՄԱՆԵՐԸ. — 1932 թ. հոկտեմբերի 1-ին ունեցած հոտի յուրաքանչյուր մերունից 120 կիլոգրամ:

ՎՈՉԽԱՐԱԲՈՒԾԱԿԱՆ ՖԵՐՄԱՆԵՐԸ. — 1932 թ. հոկտեմբերի 1-ին ունեցած հոտի յուրաքանչյուր մերունից 10 կիլոգրամ:

6. Առաջարկել հանրապետությունների ժողկոմխորհներին և յերկրգործկոմներին, յերկրկոմներին, շրջկոմիտեներին ու ազգային կոմկուսների կենտկոմներին՝ յելնելով յուրաքանչյուր շրջանի, յերկրի կամ հանրապետության համար 3-րդ կետում սահմանված նորմաներից՝ սահմանել և հոկտեմբերի 15-ից վոչ ուշ հրապարակել հանձնման ռայոնական նորմաները վորոշ բարձրացումով կամ իջեցումով, այնպես, վոր հանրապետությունների (յերկրների, շրջանների) պլանի կատարումն ապահովվի լիովին:

7. Այս ժամանակաշրջանում կոլխոզային ֆերմաների համար սահմանված պլանը հասցնել յուրաքանչյուր ֆերմային:

8. Սահմանել, վոր կոլխոզային ծխերը և մենատնտեսները պետությանը միս հանձնելու պարտավորությունները կարող են կատարել ամեն տեսակի անասուններով կամ թռչուններով, միեւնույն ժամանակ հանձնողները կարող են միանալ և խմբերով կատարել միս մատակարարելու պարտավորությունները:

9. Կատեգորիկ կերպով արգելել իշխանության տեղական որգաններին, նույնպես և մթերող կազմակերպություններին՝ կոլխոզային ապրանքային ֆերմաների, կոլխոզնիկների և մենատնտեսների վրա դնե-

լու պետությանը միս հանձնելու այնպիսի պարտավորություններ, վորոնք բարձր են սույն վորոշման 6-րդ կետի համապատասխան հրատարակված հանձնման ռայոնական նորմաներից. նույնպես և արգելել իրենց պարտավորությունները ժամանակից առաջ կատարած տնտեսություններին տալու մսի հանձնման լրացուցիչ կամ հանդիպական պլաններ, ճշտապահ հանձնողներին լիակատար հնարավորություններ տալ իրենց արտադրանքի ավելցուկների հետ ազատորեն վարվելու ըստ իրենց հայեցողության:

10. Պետությանը միս մատակարարելու պարտավորությունները կատարելուց խուսափողները — յենթարկվում են դրամական տուգանքի, պարտավորությունների չկատարած մասի մինչև շուկայական արժեքի չափով, այլ և անվիճելի կերպով տարիս են հանձնման յենթակա անասունները:

ԽՍՀ Միության ժողկոմխորհի նախագահ՝

Վ. ՄՈԼՈՏՈՎ (ՍԿՐՅԱԲԻՆ)

Համկոմկուսի (բ) Կենտկոմի քարտուղար

Ի. ՍՏԱԼԻՆ

1932 թ. սեպտեմբերի 23-ին:



# ՄՍԱՄԹԵՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

## ԱՍՖԽՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՅԵՎ ՎԵԿԱՊԵ-Ի (Բ) ԱԴՐՅԵՐԿՐԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Համաձայն ԽՍՀՄ Ժողկոմխորհի և Համ. Կ.Կ. (բ) Կենտկոմի սույն տարվա սեպտեմբերի 23-ի վորոշման՝ ԱՍՖԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը և Համ. Կ. Կ. (բ) Անդրյերկրկոմը վորոշում են.—

1. 1932 թվի հոկտեմբերի 1-ից մինչև 1934 թվի հունվարի 1-ը ժամանակաշրջանի համար հաստատել սովխոզների կողմից միս հանձնելու հետևյալ պլանը.

(Կենդանի քաշի տոններով)

| | 32 թ. 4-րդ յեռ | 33 թ. 1-ին յեռ | 33 թ. 2-րդ յեռ. | 33 թ. 3-րդ յեռ. | 33 թ. 4-րդ յեռ. | 15 ամսում |
|---|---|---|---|---|---|---|
| ԱՍԽՀ | | | | | | |
| Վոչխարաբույծ | 30 | — | — | 98 | 400 | 528 |
| Յուղտրեստ | 321 | 66 | 29 | 5 | 141 | 562 |
| ՀՍԽՀ | | | | | | |
| Վոչխարաբույծ | 30 | — | — | 10 | 70 | 110 |
| Յուղտրեստ | 318 | 86 | 40 | 6 | 185 | 635 |
| ՎՍԽՀ | | | | | | |
| Յուղտրեստ | 217 | 43 | 21 | 4 | 103 | 393 |
| Խոզաբույծ | 182 | 200 | 150 | 40 | 250 | 822 |
| Սաատրեստ | — | — | — | — | — | — |

2. 1932 թ. հոկտեմբերի 1-ից հարկի ուժ ունեցող բոլոր գյուղացիական մենատնտեսությունների և կոլխոզային ծխերի համար սահմանել պետությանը միս մատակարարելու (հանձնելու) պարտավորություններ՝ պետական սահմանված գներով:

3. ԱՍՖԽ Հանրապետություններում 15 ամսվա (1932 թ. հոկտեմբերի 1-ից մինչև 1934 թ. հունվարի 1-ը ժամկետի) համար սահմանել հանձնման հետևյալ միջին նորմաները, կենդանի քաշի կիլոգրամներով.—

| | Ապրանքային ֆերմաներից դուրս կոլխոզային ծխերի համար | Ապրանքային ֆերմաներում ընդգրկված կոլխոզային ծխերի համար | Մենատնտեսների համար |
|---|---|---|---|
| ԱՍԽՀ . . . . | 34 | 23 | 50 |
| ՀՍԽՀ . . . . | 33 | 23 | 49 |
| ՎՍԽՀ . . . . | 25 | 16 | 37 |

4. Մինչև 1932 թվի հոկտեմբերի 1-ը հողային և կոլխոզային օրգանների կողմից ձևակերպված ապրանքային անասնաբուծական կոլխոզային ֆերմաների համար սահմանել պետությանը հանձնելու հետևյալ նորմաները՝ 1932 թ. հոկտ. 1-ից մինչև 1934 թվի հունվարի 1-ը ժամկետի համար, կենդանի քաշի կիլոգրամներով. —

ա) Կաթնատնտեսական ֆերմաներում — մինչև 1932 թ. հոկտ. 1-ը ունեցած ամբողջ հոտի, բացառությամբ, մատղաշի, յուրաքանչյուր կովից 30 կիլոգրամ.

բ) Խոշոր եղջերավոր անասունների մսային



ֆերմաներում — մինչև 1932 թ. հոկտեմբերի 1-ն ունեցած հոտի ամեն մի գլխից 30 կիլոգրամ.

գ) Խոզաբուծական ապրանքային ֆերմաներում — մինչև 1932 թ. հոկտեմբերի 1-ն ունեցած հոտի յուրաքանչյուր մերունից 120 կիլոգրամ.

դ) Ոչխարաբուծական ֆերմաներում — մինչև նույն տարվա հոկտ. 1-ն ունեցած հոտի յուրաքանչյուր մաքիից 10 կիլոգրամ.

5. Առաջարկել Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի հանրապետությունների ժողկոմխորհներին ու կոմկուսի (բ) կենտկոմներին, ելնելով սույն որոշման 3-րդ կետում մենատնտեսությունների և կոլխոզային ծխերի միս հանձնելու համար մատնանշված նորմաներից, յուրաքանչյուր ռայոնի համար հանձնման նորմաներ սահմանել՝ որոշ տատանումներով, այն հաշվով, որպեսզի ապահովվի հանրապետական պլանի կատարումը:

Միս հանձնելու համար սահմանված ռայոնական նորմաները պետք է նոյեմբերի 10-ից ոչ ուշ հրապարակվեն տեղական մամուլում, իսկ կոլխոզային ապրանքային ֆերմաների կողմից հանձնման պլանները մինչև նույն ժամկետը պետք է հասցնել յուրաքանչյուր ֆերմային:

6. Սահմանել, որ պետությանը միս հանձնելու պարտավորությունները կոլխոզային ծխերը և մենատնտեսները կատարում են անասունների և թռչունների որևէ տեսակով, որի հետ միասին հանձնողները կարող են խմբեր կազմել՝ միս մատակարարելու պարտավորությունները միասին կատարելու համար:

7. Պարտավորեցնել հանրապետությունների ժողկոմխորհներին՝ կտրականապես արգելել իշխանության տեղական օրգաններին, նույնպես և մթերող

կազմակերպություններին՝ կոլխոզային ապրանքային ֆերմաների, կոլխոզնիկների և մենատնտեսների վրա պետությանը միս հանձնելու այնպիսի պարտավորություններ դնել, վորոնք ավելի են սույն վորոշման 5-րդ կետի համաձայն սահմանված հանձնման տարոնական նորմաներից. նույնպես և արգելել միս հանձնելու լրացուցիչ կե[...]հանդիպական պլաններ տալու այն տնտեսություններին, վորոնք ժամկետից առաջ կատարել են իրենց պարտավորությունները, կանոնավոր հանձնողների համար ապահովելով լիակատար հնարավորություն, վոր ազատորեն տնօրինեն իրենց արտադրանքի ավելցուկները իրենց հայեցողությամբ:

8. Պետությանը միս մատակարարելու պարտավորությունների կատարումից խուսափողները յենթարկվում են դրամական տուգանքի՝ պարտավորությունների չկատարած մասի շուկայական արժեքի չափով դրա վերով հանձնման յենթակա անասունն անվիճելի կարգով:

ԱՍՖԽՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ՝ ՄՈՒՍԱԲԵԿՈՎ

Համ. Կ. Կ. (բ) Անդրյերկրկոմի քարտուղար՝ ԲԵՐԻԱ



# ՄՍԱՄԹԵՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

## ԱԽՍՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՅԵՎ ԱԴՐԿՈՄԿՈՒՍԻ (Բ) ԿԵՆՏԿՈՄԻ 1932 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

Համաձայն Միության Ժողկոմխորհի ու Համ. Կ. Կ. (բ) Կենտկոմի 1932 թ. սեպտեմբերի 23-ի և ԱՍՖԽՀ Ժողկոմխորհի ու Համ. Կ. Կ. (բ) Անդրյերկրկոմի 1932 թվի հոկտեմբերի 27-ի վորոշումների՝ ԱԽՍՀ ժողովրդական կոմիսարների խորհուրդը և Ադրկոմկուսի (բ) Կենտկոմը վորոշում են. —

1. Տուրքի ուժ ունեցող բոլոր գյուղացիական մենատնտեսությունների և կոլխոզային ծխերի համար 1932 թվի հոկտեմբերի 1-ից սկսած սահմանել պետությանը միս մատակարարելու (հանձնելու) պարտավորություն՝ սահմանված պետական գներով:

2. 15 ամսվա — 1932 թվի հոկտեմբերի 1-ից մինչև 1934 թ. հունվարի մեկը ժամկետի համար, սահմանել մսի հանձնման հետևյալ նորմաները կենդանի քաշի կիլոգրամներով՝ գյուղացիական մենատնտեսությունների համար առանձին, անասնաբուծական ապրանքային ֆերմաներ չունեցող կոլխոզների կոլխոզային ծխերի համար առանձին և անասնաբուծական ապրանքային ֆերմաներ ունեցող կոլխոզների կոլխոզային ծխերի համար առանձին:

| ՌԱՅՈՆՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ | Գյուղացիական մենատնտեսությունների համար | Անասնաբուծ. ապր. ֆերմ. չունեցող կոլխոզների կոլխոզային ծխերի համար | Անասնաբուծ. ապրանք. ֆերմ. չունեցող կոլխոզների ծխերի համար |
|---|---|---|---|
| **ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՌԱՅՈՆՆԵՐ** | | | |
| 1. Ղարաղոնլուի | | | |
| 2. Ղոնաղքենդի | | | |
| 3. Սամուխի | | | |
| 4. Դոստափուրի | | | |
| 5. Քելբաջարի | 57 | 35 | 22 |
| 6. Աղջաբադու | | | |
| 7 Կասում-Իզմայիլովի | | | |
| 8. Գետաբեկի | | | |
| 9. Ղազախի | | | |
| **ՅԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՌԱՅՈՆՆԵՐ** | | | |
| 10. Դիվիչու | | | |
| 11. Լաչինի | 52 | 33 | 21 |
| 12. Բարդայի | | | |
| **ՅԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՌԱՅՈՆՆԵՐ** | | | |
| 13. Ալի-Բայրամլուի | | | |
| 14. Սաբիր-Աբադի | | | |
| 15. Զանգելան | | | |
| 16. Ջեբրայիլի | | | |
| 17. Քուրդամիրի | | | |
| 18 Զաքաթալայի | | | |
| 19. Կախի | 48 | 31 | 20 |
| 20. Նարիմանովի | | | |
| 21. Շամխորի | | | |
| 22. Իսմայիլլուի | | | |
| 23. Վարդաշենի | | | |
| 24. Թովուզի | | | |
| 25. Աղդամի | | | |
| 26 Կուտկաշենի | | | |
| 27. Աղդաշի | | | |
| **ՉՈՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՌԱՅՈՆՆԵՐ** | | | |
| 28. Կարյագինի | | | |
| 29. Գյանջայի | | | |
| 30. Սալյանի | | | |
| 31. Գիշի | | | |
| 32 Շամախու | | | |
| 33. Գյոգչայի | 44 | 29 | 18 |
| 34. Նուխու | | | |
| 35. Աղջաքենդի | | | |
| 36. Մասսալլուի | | | |
| 37. Խիզինի | | | |
| 38. Բելոկանի | | | |

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՌԱՅՈՆՆԵՐ

| | | | |
|---|---|---|---|
| 39. Աստրախան-Բազարի | | | |
| 40 Բելասուվարի | | | |
| 41. Վերգրադուգի | | | |
| 42. Զուվանդի | | | |
| 43. Աստարայի | 44 | 29 | 18 |
| 44 Լենքորանի | | | |
| 45. Ղուբայի | | | |
| 46. Խաչմազի | | | |

## ՎԵՑԵՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՌԱՅՈՆՆԵՐ

| | | | |
|---|---|---|---|
| 47. Կալա. Մաշտաղայի. | 35 | 24 | 14 |
| Նախ. ԽՍՀ և Ի. Լ. Ղարաբաղի համար սահմանել հետևյալ նորմ. | | | |
| 48. Նախ. ԽՍՀ | 35 | 24 | 14 |
| 49. Ի. Լ. Ղ. | 44 | 29 | 18 |

3. Հողային և կոլխոզային օրգանների կողմից մինչև 1932 թվի հոկտեմբերի 1-ը ձևակերպված ապրանքա-անասնաբուծական ֆերմաների համար սահմանել պետությանը միս հանձնելու առանձին պլան՝ 1932 թվի հոկտեմբերի 1-ից մինչև 1934 թվի հունվարի 1-ը ժամկետի համար՝ հետևյալ նորմաներով, կենդանի քաշի կիլոգրամներով:

Կաթնային ֆերմաներ

Լաչինի, Շահումյանի, Գետաբեկի, Նարիմանովի, Ղազախի, Թավուզի ռայոններ և Ի. Լ. Ղ. — 30 կիլոգրամ.



Դաստաֆյուրի, Կախի, Քելբաջարի, Սամուխի, Շամախու, Շամխորի, Կասում-Իսմայիլովի — 30 կիլոգրամ.

Կարյագինի, Ջեբրայիլի, Կուտկաշենի, Գիլի, Վարդաշենի, Ղուբայի, Զանգելանի, Խաչմազի, Գեոգչայի, Քյուրդամիրի, Գյանջայի, Ղարադոնլու, Խիզինի, Դիվիչու — 25 կիլոգրամ.

Նախ. Խ. Ս. Հ., Զուվանդի — 20 կիլոգրամ:

Բաքվի — 35 կիլոգրամ.

սա 1-ը հոկտեմբերի 1932 թ. չեղած հոտի յուրաքանչյուր կովից, բացառությամբ ամբողջ մատղաշի:

Խոզաբուծական ֆերմաներ

Ըստ մեկն հոկտեմբերի 1932 թ. չեղած չերամակի յուրաքանչյուր մերունից 120 կիլոգրամ:

Վոչխարաբուծական ապրանքային ֆերմաներ

Ըստ 1-ն հոկտեմբերի 1932 թ. չեղած յուրաքանչյուր մաքիից 10 կիլոգրամ:

4. Սովխոզների և անասնաբուծական ապրանքային ֆերմաների համար ըստ չեռամսյակների սահմանել մսամթերումների հետևյալ պլանը. —

| Ա Ն Ո Ւ Ն | 32 թ V եռ. | 33 թ I եռ. | 33 թ II եռ. | 33 թ III եռ. | 33 թ VI եռ. | 15 ամիս |
|---|---|---|---|---|---|---|
| Սովխոզներ | | | | | | |
| Ցուղ. տրեստ... | 321 | 66 | 29 | 5 | 141 | 562 |
| Վոչխարաբուծ տրեստ | 30 | — | — | 98 | 400 | 528 |
| Ընդամենը | 351 | 66 | 29 | 103 | 541 | 1090 |

5. Ծխին հասնող նորմաների սակագներով մենատնտեսների և կոլխոզնիկների համար մսամթերումների 15-ամյա պլանի կատարման հետևյալ օրացույցային ժամկետները սահմանել. —

| | | | |
|---|---|---|---|
| 1932 | թվի | 4-րդ յեռամսյակ | — 16% |
| 1933 | » | 1-ին » | — 15% |
| 1933 | » | 2-րդ » | — 17% |
| 1933 | » | 3-րդ » | — 26% |
| 1933 | » | 4-րդ » | — 26% |

6. Առաջարկել ռայոնական գործադիր կոմիտեներին և կուսակցության ռայկոմներին, ելնելով սույն վորոշման 2-րդ և 3-րդ կետերում սահմանված նորմաներից, յուրաքանչյուր ռայոնի համար մսամթերման պլան կազմել ըստ սելսովետների և նոյեմբերի 10-ից վոչ ուշ, մսի հանձնման պլանը հասցնել կոլխոզային ապրանքային ֆերմաներին, պարտավորեցնել գյուղխորհուրդներին, վոր սահմանված նորմաների հիման վրա՝ տասնօրյա ժամկետում կազմեն մսի հանձնողների ցուցակը, մատնանշելով հանձնման չափն ու ժամկետը և ստորագրություն առնելով տան այն հանձնողներին:

7. Առաջարկել բոլոր ռայգործկոմներին և կուսակցության ռայկոմներին, ռայգործկոմների նախագահների ու կուսակցության ռայկոմների քարտուղարների անձնական պատասխանատվությամբ՝ սույն տարվա նոյեմբերի 10-ից վոչ ուշ, գյուղխորհուրդների նախագահների, կուսբջիջների քարտուղարների, կոլխոզների վարչությունների նախագահների, ապրանքային ֆերմաների վարիչների ռայոնական խորհրդակցություն հրավիրել, խորհրդակցությունում դնել մսամթերումների մասին Միության Ժողկոմխորհի և



Համ. Կ. Կ. (բ) Կենտկոմի 1932 թ. սեպտ. 23-ի վորոշման նշանակության, մսամթերումների ռայոնական պլանի ժամանակին կատարման հարցերը, ծավալելով մասսայական բացատրական կամպանիա, ներգրավելով տեղական մամուլը:

8. Սահմանել, վոր կոլխոզային ծխերը և մենատնտեսները պետությանը մսի հանձնելու պարտավորությունները կարող են կատարել անասունների վորյեվե տեսակով և թռչուններով. դրա հետ միասին հանձնողները կարող են խմբեր կազմել՝ մսի մատակարարելու պարտականությունները միասին կատարելու համար:

9. Կտրականապես արգելել իշխանության տեղական օրգաններին, նույնպես և մթերող կազմակերպություններին՝ կոլխոզային ապրանքային ֆերմաների, կոլխոզնիկների և մենատնտեսների վրա պետությանը մսի հանձնելու այնպիսի պարտավորություններ դընել, վորոնք ավելի են սույն վորոշման 2-րդ կետի համաձայն սահմանված հանձնման ռայոնական նորմաներից, նույնպես և արգելել մսի հանձնելու լրացուցիչ կամ հանդիպական պլաններ տալու այն տնտեսություններին, վորոնք ժամկետից առաջ կատարել են իրենց պարտավորությունները, կանոնավոր հանձնողների համար ապահովելով լիակատար հնարավորություն, վոր ազատորեն տնօրինեն իրենց արտադրանքի ավելցուկը, իրենց հայեցողությամբ:

10. Պետությանը մսի մատակարարելու պարտավորությունների կատարումից խուսափողները յենթարկվում են դրամական տուգանքի՝ պարտավորությունների չկատարած մասի շուկայի արժեքի չափով, անվիճելի կարգով գրավելով հանձնման յենթակա անասունը:

11. Թույլ տալ Ի. Լ. Ղարաբաղի շրջգործկոմին, կուսակցության շրջկոմին, Նախ. ԽՍՀ կենտգործկոմին և շրջկոմին, ելնելով սույն վորոշման 2-րդ և 3-րդ կետերով սահմանված նորմաներից՝ 1932 թվի նոյեմբերի 10-ից վոչ ուշ՝ սահմանել և հրապարակել հանձնման ռայոնական նորմաներ, նորմայից բարձր կամ ցածր վորոշ տատանումներով, այնպես, վոր ապահովված լինի պլանի լիակատար կատարումը:

ԱխՍՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ՝ ԲԱԳԻՐՈՎ

Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի քարտուղար՝

[redacted].

ՀՀ Ազգային գրադարան
NL0238232

**AZQOLXOZSENTıR**

Firqə və hөkumətin ət tədarьkь haqqьnda qərarь

AZERNEŞR — 1932 il BAKU